ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/16

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Փեյփր հաուս» ՍՊԸ-ի տնօրեն Ա.Աբելյանի (պետական ռեգիստրի վկայական՝ թիվ 264.110.1093364),

«Փեյփր հաուս» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Կ.Պողոսյանի (լիազորագիր՝ տրված 25.03.2021թ.),

ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչներ

Գ. Գևորգյանի (լիազորագիր՝ տրված 25.03.2021թ.),

Ա. Մուրադյանի (լիազորագիր՝ տրված 25.03.2021թ.),

քննելով ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար A 4 ֆորմատի թղթի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-8/1» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Փեյփր հաուս» ՍՊԸ-ի կողմից 18.03.2021թ. ներկայացված (19.03.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/16 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «<u>Փեյփր հաուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Փեյփր հաուս» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 18.03.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար 2021թ. մարտի 12-ին ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է թիվ «ՀՀ ՊՆ- ԲՄԱՊՁԲ-21-8/1» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգ: Բաց մրցույթը իրականացվում է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www. armeps.am) համակարգի միջոցով: Գնման առարկա է հանդիսանում ՀՀ պաշտպանության կարիքների համար A4 ֆորմատի թղթի ձեռքբերումը նախարարության (այսուհետ՝ Ապրանք), որը խմբավորված է 1 չափաբաժնում:

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար անհրաժեշտ A4 ֆորմատի թղթի տեխնիկական բնութագիրն է՝

Թուղթ չկավճած, օգտագործվում է լազերային և թանաքային տպագրման, պատճենահանման և գրասենյակային այլ աշխատանքների համար: Ձևաչափը՝ A4 (210x297մմ): Խտությունը՝ համաձայն ISO 536 ստանդարտի՝ 80 գր/մ2, սպիտակությունը՝ համաձայն ISO 11475 ստանդարտի առնվազն 169% CIE, անթափանցելիությունը՝ համաձայն ISO 2471 ստանդարտի առնվազն 93%, պայծառությունը՝ համաձայն ISO 2470 ստանդարտի առնվազն 107%, անհարթությունը՝ համաձայն ISO 8791 ստանդարտի 150 մլ/րոպե-ից ոչ ավել: Մեկ տուփի մեջ թերթերի քանակը գործարանային փաթեթավորմամբ՝ 500 թերթ, առանց շեղումների, 1 տուփի քաշը՝ 2,5 կգ (4/-0.05կգ): 500 թերթանոց յուրաքանչյուր 5 տուփ փաթեթավորված ստվարաթղթե արկղի մեջ: Յուրաքանչյուր տուփի և արկղի վրա լինի «ՀՀ ՊՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ» առանց փաթեթավորումը վնասելու չմաքրվող մակագրությունը:

Փեյփր Հաուս ՍՊ ընկերությունը ներկայացնում է Ավստրալիայում արտադրված Reflex մակնիշի A4 ձևաչափի թուղթ: Համապատասխան սերտիֆիկատների համաձայն՝ նշված թուղթը օգտագործելուց երաշխավորված է շահագործվող հնագույն նորագույն տեխնիկայի՝ տպիչների, պատճենահանման սարքերի, ռիզոգրաֆների և օգտագործվող թղթի որակի նկատմամբ խիստ զգայուն տպագրական այլ մեքենաների անխափան աշխատանքը և թղթի պահպանման երկարատև ժամկետը: Սակայն Reflex մակնիշի A4 ձևաչափի A+ դասի թուղթը՝ սպիտակության, անհարթության և անթափանցելիության պարամետրերով շատ

փոքր տարբերությամբ է զիջում ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար անհրաժեշտ պարամետրերով թղթին:

Այդ իսկ պատճառով Փեյփր Հաուս ընկերությունը դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ պարզաբանելու արդյոք ինչով է պայմանավորված A4 ձևաչափի թղթի վերոնշյալ պարամետրերով պայմանը: Ներկայացնում եմ 12.03.2021թ. Փեյփր Հաուս ՍՊ ընկերության կողմից կատարված հարցադրումը.

Հարցադրում N 1՝

Խնդրում եմ պարզաբանել. ինչով է պայմանավորված A4 ձևաչափի թղթի առնվազն 169CIE սպիտակության, առնվազն 93% անթափանցելիության և 1500լ/ռոպե-ից ոչ ավել անհարթության պայմանները, քանի որ A դասի թուղթ է համարվում 161CIE և բարձր սպիտակություն, 90% և բարձր անթափանցելիություն, 180մլ/ռբպե և ցածր անհարթություն ունեցող թուղթը, իսկ A+պրեմիում դասի թուղթ է համարվում 164CIE և բարձր սպիտակություն, 92% և բարձր անթափանցելիություն, 160մլ/ռբպե և ցածր անհարթություն ունեցող թուղթը:

Նշեմ, որ Փեյփր Հաուս ՍՊ ընկերությունը ներկայացնում է Reflex մակնիշի A4 ձևաչափի թուղթ, որը համապատասխանում է A+ դասին, հետևաբար խնդրում եմ փոփոխել պահանջվող պարամետրերը, ինչը հնարավորության կտա Փեյփր Հաուս ՍՊ ընկերությանը մասնակցելու պատվիրատուի կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-8/1» ծածկագրով մրցույթին:

Ի պատասխան Փեյփր Հաուս ՍՊ ընկերության՝ 15.03.2021թ. ՀՀ պաշտպանության նախարարությունը պարզաբանել է՝

Պարզաբանում N 1՝

Ի պատասխան պարզաբանման հարցման՝ հայտնում է, որ A4 ձևաչափի թղթի առնվազն 169 CIE սպիտակության, առնվազն 93% անթափանցելիության և 150 մլ/ռոպե-ից ոչ ավել անհարթության պայմանները պայմանավորված են ՀՀ ՊՆ համակարգում և մասնավորապես ՊՆ գերատեսչական տպարանում շահագործվող տեխնիկայի՝ տպիչների, պատճենահանման սարքերի, ռիզոգրաֆների և թղթի որակի նկատմամբ խիստ զգայուն տպագրական այլ մեքենաների շահագործման պայմաններով և բարձրորակ թղթի օգտագործման դեպքում երաշխավորվում է շահագործվող տեխնիկայի անխափան աշխատանքը: Հաշվի առնելով ՀՀ ՊՆ համակարգում կիրառվող բազմատեսակ տպագրական տեխնիկայի, ինչպես նաև յուրաքանչյուր առանձին

տպագրական սարքի համար առանձին տեսակի թուղթ գնելու աննպատակահարմարությունն ու անհնարինությունը և միաժամանակ այդ տեխնիկայի անխափան աշխատանքի ապահովման անհրաժեշտությունը՝ A4 ձևաչափի թղթի համար սահմանվել են վերոնշյալ նվազագույն պահանջները:

Ինչը վերաբերում է գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն գնման գործընթացին հնարավոր մասնակիցների համար մրցակցության հավասար պայմանների ապահովմանը և մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը՝ հայտնում է, որ ներկայացվել է ոչ թե կոնկրետ ֆիրմա, այլ պատվիրատուի կարիքների բավարարման նպատակով նվազագույն պահանջ, այն է «առնվազն» և «ոչ ավել» բառերի օգտագործումը տեխնիկական բնութագրում:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տրված վերոնշյալ փաստարկի պարզաբանումը Փեյփր Հաուս ՍՊ ընկերության կողմից է ոչ հիմնավորված: Հակասելով ՀՀ Գնումների մասին օրենքի 13 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետին՝ ՀՀ Պաշտպանության Նախարարությունը ստեղծում է ոչ հավասար պայմաններ բոլոր մասնակիցների համար և հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, քանի որ Փեյփր Հաուս ՍՊ ընկերության կողմից ներկայացվող A4 ֆորմատի թղթի սերտիֆիկատներով ամրագրված պարամետրերը լիովին բավարարում են ՀՀ Պաշտպանության Նախարարությանը անհրաժեշտ կարիքներին և չեն ստեղծում խնդիրներ շահագործվող տեխնիկայի անխափան աշխատանքում»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ կատարել «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-8/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրի փոփոխություն՝ շտկելով առկա անհամապատասխանությունը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.03.2021թ. ժամը 09:40-ին և 30.03.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր տնօրենի և ներկայացուցչի մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 30.03.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր նիստի ընթացքում հայտնել են հետևյալը.

«Տեխնիկական բնութագիրը սահմանելիս պատվիրատուն չի սահմանել A4 թղթի որևէ դաս, այսինքն՝ A դաս, B դաս, A+ դաս: Սահմանել է այն մինիմալ պահանջները, որոնց կարիքն ունի, այսինքն՝ սպիտակությունը՝ առնվազն 169, անթափանցելիությունը՝ առնվազն 93, անհարթությունը՝ առավելագույնը՝ 150, սահմանվել են պարամետրեր ոչ թե որպես խոչընդոտ, այլ նվազագույն շեմ, որի կարիքն ունի ՀՀ պաշտպանության նախարարությունը: Մի քանի տարվա փորձը ցույց է տալիս, որ ցածր սպիտակությամբ բարձր անհարթությամբ թղթի կիրառությունը հանգեցնում է գերատեսչական տպարանում առկա թանկարժեք տպիչ սարքերի հանգույցների շուտ շարքից դուրս գալուն, այսինքն դա ավելորդ ծախսեր է առաջացնում, նպատակը ընդամենը բարձր որակի թուղթ ձեռք բերելն է: Մինչև 168 սպիտակության թուղթը հնարավոր է ստանալ կավճի միջոցով, ոչ թե ցելյուլոզի, ինչը հանգեցնում է մեքենաների հանգույցների խափանման»:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2021/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար համար A 4 ֆորմատի թղթի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-8/1» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որի հայտարարությունը և հրավերը 12.03.2021թ. հրապարակվել են տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք):

2. Ընթացակարգի հրավերում ներառված պայմանագրի նախագծի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագրով, սահմանվել է հետևյալը.

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Տեխնիկական բնութագիր
1	A 4 ֆորմատի թուղթ /թուղթ A4 ձևաչափի 80գր /210x297/մմ/	Թուղթ չկավճած, օգտագործվում է լազերային և թանաքային երկկողմանի տպագրման, պատճենահանման և գրասենյակային այլ աշխատանքների համար: Ձևաչափը՝ A4 (210x297մմ): Խտությունը՝ համաձայն ISO 536 ստանդարտի՝ 80 գր/մ2, սպիտակությունը՝ համաձայն ISO 11475 ստանդարտի առնվազն 169% CIE, անթափանցելիությունը՝ համաձայն ISO 2471 ստանդարտի առնվազն 93%, պայծառությունը՝ համաձայն ISO 2470 ստանդարտի առնվազն 107%, անհարթությունը՝ համաձայն

		ISO 8791 ստանդարտի 150 մլ/րոպե-ից ոչ ավել: Մեկ տուփի մեջ թերթերի քանակը գործարանային փաթեթավորմամբ՝ 500 թերթ, առանց շեղումների, 1 տուփի քաշը՝ 2,5 կգ (+/-0.05կգ): 500 թերթանոց յուրաքանչյուր 5 տուփ՝ փաթեթավորված ստվարաթղթե արկղի մեջ: Յուրաքանչյուր տուփի և արկղի վրա լինի <<ՀՀ ՊՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ>> առանց փաթեթավորումը վնասելու չմաքրվող մակագրությունը:

3. Պատվիրատուի կողմից 15.03.2021թ. տեղեկագրում հրապարակվել է ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-8/1 ծածկագրով ընթացակարգի հրավերի վերաբերյալ տրամադրված պարզաբանումների մասին հայտարարություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ի պատասխան պարզաբանման հարցման՝ հայտնվում է, որ A4 ձևաչափի թղթի առնվազն 169 CIE սպիտակության, առնվազն 93% անթափանցելիության և 150 մլ/րոպե-ից ոչ ավել անհարթության պայմանները պայմանավորված են ՀՀ ՊՆ համակարգում և մասնավորապես ՊՆ գերատեսչական տպարանում շահագործվող տեխնիկայի՝ տպիչների, պատճենահանման սարքերի, ռիզոգրաֆների և օգտագործվող թղթի որակի նկատմամբ խիստ զգայուն տպագրական այլ մեքենաների շահագործման պայմաններով և բարձրորակ թղթի օգտագործման դեպքում երաշխավորվում է շահագործվող տեխնիկայի անխափան աշխատանքը: Հաշվի առնելով ՀՀ ՊՆ համակարգում կիրառվող բազմատեսակ տպագրական տեխնիկայի, ինչպես նաև յուրաքանչյուր առանձին տպագրական սարքի համար առանձին տեսակի թուղթ գնելու աննպատակահարմարությունն ու անհնարինությունը և միաժամանակ այդ տեխնիկայի անխափան աշխատանքի ապահովման անհրաժեշտությունը՝ A4 ձևաչափի թղթի համար սահմանվել են վերոնշյալ նվազագույն պահանջները:

Ինչը վերաբերում է գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն գնման գործընթացին հնարավոր մասնակիցների համար մրցակցության հավասար պայմանների ապահովմանը և մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը՝ հայտնվում է, որ ներկայացվել է ոչ թե կոնկրետ ֆիրմա, այլ պատվիրատուի կարիքների բավարարման նպատակով նվազագույն պահանջ, այն է «առնվազն» և «ոչ ավել» բառերի օգտագործումը տեխնիկական բնութագրում»:

4. Պատվիրատուի կողմից 16.03.2021թ. տեղեկագրում հրապարակվել է ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-8/1 ծածկագրով ընթացակարգի հրավերի վերաբերյալ տրամադրված պարզաբանումների մասին հայտարարություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ի պատասխան պարզաբանման հարցման՝ հայտնվում է, որ A4 ձևաչափի թղթի համար արդեն իսկ սահմանված է առնվազն 169 CIE սպիտակության պայմանը, որը

պայմանավորված է ՀՀ ՊՆ համակարգում և մասնավորապես ՊՆ գերատեսչական տպարանում շահագործվող տեխնիկայի՝ տպիչների, պատճենահանման սարքերի, ռիզոգրաֆների և օգտագործվող թղթի որակի նկատմամբ խիստ զգայուն տպագրական այլ մեքենաների շահագործման պայմաններով և բարձրորակ թղթի օգտագործման դեպքում երաշխավորվում է շահագործվող տեխնիկայի անխափան աշխատանքը: Միաժամանակ հայտնվում է, որ առաջարկվող ±2 շեղումը սահմանելու դեպքում 169 CIE նվազագույն ցուցանիշի փոխարեն կնշվեր 171 CIE ±2:

Ինչը վերաբերում է գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն գնման գործընթացին հնարավոր մասնակիցների համար մրցակցության հավասար պայմանների ապահովմանը և մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը՝ հայտնվում է, որ ներկայացվել է ոչ թե կոնկրետ ֆիրմա, այլ պատվիրատուի կարիքների բավարարման նպատակով նվազագույն պահանջ, այն է «առնվազն» բառի օգտագործումը տեխնիկական բնութագրում, այսինքն 171 CIE ցուցանիշի առաջարկը (տեխնիկական բնութագրում առկա մյուս ցուցանիշներին վերաբերող պահանջների պահպանմամբ) կընդունվի»:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Փեյփր հաուս» ՍՊԸ-ի 18.03.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչների կողմից 30.03.2021թ. նիստի ընթացքում հայտնած դիրքորոշումը, տեղեկագրում 15.03.2021թ. և 16.03.2021թ. հրապարակված պարզաբանումները և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է:

Օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) ***<u>պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:</u>***

Այսպես՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար համար A 4 ֆորմատի թղթի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-8/1» ծածկագրով բաց մրցույթ, որի հայտարարությունը և հրավերը 12.03.2021թ. հրապարակվել են տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք):

Ընթացակարգի հրավերում ներառված պայմանագրի նախագծի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագրով, սահմանվել է հետևյալը.

Չ/Հ	Ապրանքի անվանումը	Տեխնիկական բնութագիր
1	A 4 ֆորմատի թուղթ /թուղթ A4 ձևաչափի 80գր /210x297/մմ/	Թուղթ չկավճած, օգտագործվում է լազերային և թանաքային երկկողմանի տպագրման, պատճենահանման և գրասենյակային այլ աշխատանքների համար: Չևաչափը՝ A4 (210x297մմ): Խտությունը՝ համաձայն ISO 536 ստանդարտի՝ 80 գր/մ2, սպիտակությունը՝ համաձայն ISO 11475 ստանդարտի առնվազն 169% CIE, անթափանցելիությունը՝ համաձայն ISO 2471 ստանդարտի առնվազն 93%, պայծառությունը՝ համաձայն ISO 2470 ստանդարտի առնվազն 107%, անհարթությունը՝ համաձայն ISO 8791 ստանդարտի 150 մլ/րոպե-ից ոչ ավել: Մեկ տուփի մեջ թերթերի քանակը գործարանային փաթեթավորմամբ՝ 500 թերթ, առանց շեղումների, 1 տուփի քաշը՝ 2,5 կգ (+/-0.05կգ): 500 թերթանոց յուրաքանչյուր 5 տուփ՝ փաթեթավորված ստվարաթղթե արկղի մեջ: Յուրաքանչյուր տուփի և արկղի վրա լինի <<ՀՀ ՊՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ>> առանց փաթեթավորումը վնասելու չմաքրվող մակագրությունը:

Պատվիրատուի կողմից 15.03.2021թ. տեղեկագրում հրապարակվել է ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-8/1 ծածկագրով ընթացակարգի հրավերի վերաբերյալ տրամադրված պարզաբանումների մասին հայտարարություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ի պատասխան պարզաբանման հարցման՝ հայտնվում է, որ A4 ձևաչափի թղթի առնվազն 169 CIE սպիտակության, առնվազն 93% անթափանցելիության և 150 մլ/րոպե-ից ոչ ավել անհարթության պայմանները պայմանավորված են ՀՀ ՊՆ համակարգում և մասնավորապես ՊՆ գերատեսչական տպարանում շահագործվող տեխնիկայի՝ տպիչների, պատճենահանման սարքերի, ռիզոգրաֆների և օգտագործվող թղթի որակի նկատմամբ խիստ զգայուն տպագրական այլ մեքենաների շահագործման պայմաններով և բարձրորակ թղթի օգտագործման դեպքում երաշխավորվում է շահագործվող տեխնիկայի անխափան աշխատանքը: Հաշվի առնելով ՀՀ ՊՆ համակարգում կիրառվող բազմատեսակ տպագրական տեխնիկայի, ինչպես նաև յուրաքանչյուր առանձին տպագրական սարքի համար առանձին տեսակի թուղթ գնելու աննպատակահարմարությունն ու անհնարինությունը և միաժամանակ այդ տեխնիկայի անխափան աշխատանքի ապահովման անհրաժեշտությունը՝ A4 ձևաչափի թղթի համար սահմանվել են վերոնշյալ նվազագույն պահանջները:

Ինչը վերաբերում է գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն գնման գործընթացին հնարավոր մասնակիցների համար մրցակցության հավասար պայմանների ապահովմանը և մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը՝ հայտնվում է, որ ներկայացվել է ոչ թե կոնկրետ ֆիրմա, այլ պատվիրատուի կարիքների բավարարման նպատակով նվազագույն պահանջ, այն է «առնվազն» և «ոչ ավել» բառերի օգտագործումը տեխնիկական բնութագրում»:

Պատվիրատուի կողմից 16.03.2021թ. տեղեկագրում հրապարակվել է ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-8/1 ծածկագրով ընթացակարգի հրավերի վերաբերյալ տրամադրված պարզաբանումների մասին հայտարարություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ի պատասխան պարզաբանման հարցման՝ հայտնվում է, որ A4 ձևաչափի թղթի համար արդեն իսկ սահմանված է առնվազն 169 CIE սպիտակության պայմանը, որը պայմանավորված է ՀՀ ՊՆ համակարգում և մասնավորապես ՊՆ գերատեսչական տպարանում շահագործվող տեխնիկայի՝ տպիչների, պատճենահանման սարքերի, ռիզոգրաֆների և օգտագործվող թղթի որակի նկատմամբ խիստ զգայուն տպագրական այլ մեքենաների շահագործման պայմաններով և բարձրորակ թղթի օգտագործման դեպքում երաշխավորվում է շահագործվող տեխնիկայի անխափան աշխատանքը: Միաժամանակ հայտնվում է, որ առաջարկվող ±2 շեղումը սահմանելու դեպքում 169 CIE նվազագույն ցուցանիշի փոխարեն կնշվեր 171 CIE ±2:

Ինչը վերաբերում է գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն գնման գործընթացին հնարավոր մասնակիցների համար մրցակցության հավասար պայմանների ապահովմանը և մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը՝ հայտնվում է, որ ներկայացվել է ոչ թե կոնկրետ ֆիրմա, այլ պատվիրատուի կարիքների բավարարման նպատակով նվազագույն պահանջ, այն է «առնվազն» բառի օգտագործումը տեխնիկական բնութագրում, այսինքն 171 CIE ցուցանիշի առաջարկը (տեխնիկական բնութագրում առկա մյուս ցուցանիշներին վերաբերող պահանջների պահպանմամբ) կընդունվի»:

Այսպիսով՝ հարկ եմ համարում արձանագրել, որ Պատվիրատուի կողմից գնման առարկայի տեխնիկական բնութագիրը սահմանվել է Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների պահպանմամբ, ինչը պատվիրատուն հիմնավորել է նաև իր կողմից 15.03.2021թ. և 16.03.2021թ. հրապարակված պարզաբանումներով, և քանի դեռ հակառակը չի ապացուցվել և հիմնավորվել, որպիսի պարտավորությունը կրում

է բողոքաբերը, հայտնում եմ, որ նման պայմաններում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն **<u>օժտված չէ այնպիսի լիազորությամբ, որը թույլ կտար վերջինիս տալ</u> գնահատական՝ արդյո՞ք Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերում ներառված գնման առարկան և դրա համար սահմանված տեխնիկական պահանջները համապատասխանում են Պատվիրատուի կարիքին, թե՞ ոչ:**

Այսպիսով՝ ուսումնասիրելով «Փեյփր հաուս» ՍՊԸ-ի 18.03.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ պաշտպանության նախարարության դիրքորոշումը, Պատվիրատուի կողմից հրապարակված հրավերը և Ընթացակարգի հրավերի վերաբերյալ պարզաբանումները՝ գտնում եմ, որ ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Փեյփր հաուս» ՍՊԸ-ի կողմից 18.03.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**